Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2022 թվականի նոյեմբերի 22-ի
N 658-Ա որոշման

Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Բ Ն Ո Ւ Թ Ա Գ Ի Ր

Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունների հաշվեքննության (աուդիտի) ծառայությունների

Պետք է իրականացվեն Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունների աուդիտորական ծառայություններ: Աուդիտորական ծառայությունների ավարտման վերջնաժամկետ է սահմանվում 2023 թվականի փետրվարի 21-ը: Աուդիտը պետք է իրականացվի ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան: Աուդիտ անցկացնելու ընթացքում անհրաժեշտ է իրականացնել.

ա) աուդիտի ենթարկվող օբյեկտի կողմից իրականացվող գործառույթների՝ օրենսդրության պահանջներին համապատասխանության գնահատում,

բ) աուդիտի ենթարկվող օբյեկտի կողմից ծախսերի տնտեսման ուղղությամբ իրականացվող աշխատանքների և տնտեսական հնարավորությունների օգտագործման գնահատում,

գ) աուդիտի ենթարկվող օբյեկտի բնականոն աշխատանքը խանգարող արհեստական խոչընդոտների ու ապօրինի գործողությունների բացահայտում:

Աուդիտորական հաշվետվությունում ներկայացված տեղեկատվությունը պետք է լինի հստակ, համառոտ և ամբողջական՝ բացառելով որևէ փաստացի անճշտություն: Աուդիտորական հաշվետվությունում ներառվում են նաև աուդիտորական ապացույցների քանակական հաշվարկներն ու գնահատականները, ինչպես նաև հղումներ օրենսդրության պահանջներին: